ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման հարցերով փորձագետ՝ Արմինե Երգենյանի կողմից 2024թ-ի հունիսի 15-ից մինչև 2024թ-ի հուլիսի 19-ը կատարված աշխատանքների վերաբերյալ

1. Իրականացված աշխատանքների ընդհանուր նկարագիր

1" Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման հարցերով փորձագետի կողմից իրականացվել է աշխատանքային ծրագրով նախատեսված ինը կետերից հինգ կետերի մասով ամենօրյա ռեժիմով աշխատանքներ, մասնավորապես.

1) Իրականացվել է բյուջետային գործընթացի շրջանակներում, տվյալների հավաքագրման, մշակման, ամփոփման, հաշվապահական հաշվառման վարման և հաշվետվությունների ներկայացման աշխատանքներ (առաջին կիսամյակի բյուջետային հաշվետվություն՝ LS Finance, ՀԾ ծրագրերով, հաշվապահական օրդերների մուտքագրում, պահեստի վարում):

2) Իրականացվել է ֆինանսական հաշվետվությունների նախագծերի մշակման, ֆինանսական ռեսուրսների գնահատման, Կոմիտեին վերապահված մասով նախատեսվող և գանձվող պետական տուրքերի հունիս ամսվա տվյալների հավաքագրման աշխատանքներ և ներկայացվել է հաշվետվություններ համապատասխան պետական մարմիններ:

3) Իրականացվել է հունիս ամսվա Կոմիտեի աշխատողների աշխատավարձին հավասարեցված վճարների (ստաժի հավելավճարների), վերապատրաստումների և արտասահմանյան գործուղումների հաշվարկ և հաշվետվություններ է ներկայացվել համապատասխան պետական մարմիններ:

4) Ուսումնասիրվել և վերլուծվել է ավիաընկերությունների կողմից ներկայացված ԻԿԱՕ-ի Միջազգային ավիացիայում ածխաթթու գազի արտանետումների նվազեցման և փոխարինման համակարգի (CORSIA) վերաբերյալ օդանավ շահագործող ընկերությունների՝ «Ֆլայուան Արմենիա» ՍՊԸ-ի ածխաթթու գազերի արտանետումների ծրագրի և ծավալների վերաբերյալ տեղեկատվություն, մանավորապես «Ֆլայուան Արմենիա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մոնիտորինգի պլանը:

5) Իրականացվել է Հայաստանի Հանրապետության օդանավակայաններից ուղևորափոխադրումների վերաբերյալ հունիս ամսվա վերլուծություն և ամփոփման աշխատանքներ:

2"Աշխատանքային ծրագրով նախատեսված մյուս կետերի մասով հիմնականում կատարվել է տվյալների ուսումնասիրում և հավաքագրում, իրականացվող աշխատանքների ուսումնասիրության մասով ծանոթացել եմ առկա նյութերին և հաշվառել դրանք:

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման հարցերով փորձագետ՝

Արմինե Երգենյան

Արմինե Երգենյանի կողմից կատարված աշխատանքները գնահատում եմ՝

_____

(բավարար, լավ կամ գերազանց)

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահ՝

Միհրան Խաչատրյան

«_____» _____ **2024թ.**